



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 01 » ակտյոբեմբեր 2020 թ.

N 143-Ա/Լ

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԲԱՎ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով և նպատակ ունենալով ապահովել պետական կառույցների ներկայացուցիչների համագործակցությունը՝ նպաստելու «Հայաստանում սոցիալական ներառման և ինքնաբավ կենսապահովման միջոցառումների խթանում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) թիրախային հինգ մարզերի (Արարատ, Արմավիր, Կոտայք, Լոռի, Շիրակ) բնակչության խոցելի խմբերի աղքատության հաղթահարմանը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել Ծրագրի իրականացման աջակցության **խորհուրդ**: (այսուհետ՝ **խորհուրդ**):
2. Հաստատել խորհրդի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Սահմանել, որ խորհրդի հիմնական գործառույթներն են՝



1) լսել Ծրագրի միջոցառումների տարեկան պլանը, բյուջեն, կիսամյակային հաշվետվությունները և ներկայացնել առաջարկություններ,

2) աջակցել Ծրագրի արդյունքների և ձեռքբերումների ինստիտուցիոնալացմանն ու տարածմանը Հայաստանի Հանրապետությունում, նպաստել Ծրագրի և պետական աջակցությամբ իրականացվող այլ ծրագրերի միջոցառումների արդյունավետ համադրմանը.

3) աջակցել Ծրագրի իրականացմանը՝ ապահովելով սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային, մարզպետարանների և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան մասնագետների մասնակցությունը ձեռնարկատիրական դրամաշնորհների հայտերի գնահատման տեղական կոմիտեների աշխատանքներում.

4) լսել Ծրագրի շահառուներին տրամադրվող ձեռնարկատիրական դրամաշնորհների հայտերի գնահատման տեղական կոմիտեների աշխատանքների մասին հաշվետվությունները.

5) աջակցել Ծրագրի սոցիալապես անապահով ընտանիքների տնտեսական ներուժի և ինքնազբաղ գործունեության զարգացմանը՝ շահառուների ակտիվացման քաղաքականության առաջխաղացման միջոցով.

6) աջակցել Ծրագրի իրականացման ընթացքում առաջացած տարբեր խնդիրների լուծմանը, այդ թվում՝ Ծրագրի շահառուներին տրամադրվող բիզնես ենթադրամաշնորհների իրականացման հնարավոր բարդությունների վերացման հարցերում:

4. Խորհրդի նախագահին՝ Խորհրդի առաջին նիստը հրավիրել սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, հետագա նիստերը՝ վեց ամիս պարբերականությամբ և ըստ անհրաժեշտության:

X

ԶԱՐՈՒՆԻ ԲԱԹՅԱՆ

Signed by: BATOYAN ZARUHI 7909790279



Զ. ԲԱԹՅԱՆ

Հավելված
ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարի

01 սեպտեմբերի 2018 թ. -
N հրամանի
143-Ա/Տ

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

- Աննա Ժամակոչյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ (Խորհրդի նախագահ)
- Միրա Անտոնյան - «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» ՀԿ նախագահ (համաձայնությամբ)
- Աստղիկ Մինասյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդական
- Աննա Վարդանյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային զարգացման վարչության համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ (համաձայնությամբ)
- Նարե Իլիաթյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի իրավախորհրդատու (համաձայնությամբ)
- Լիլիթ Հայրապետյան - «Ներդրումների աջակցության կենտրոն» հիմնադրամի խորհրդատվական աջակցության համակարգող (համաձայնությամբ)

